

Սերգեյ Իվանովիչ Վավիլով

# ՍԵՐԳԵՅ ԻՎԱՆՈՎԻՉ ՎԱՎԻԼՈՎ

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԵՎ ՀԱՄԿ(բ)Պ ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմը խորը վշտով հայտնում են, որ 1951 թվականի հունվարի 25-ին, Մոսկվայում, կյանքի 60-րդ տարում, ծանր հիվանդությունից հետո մեռավ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ, Քաղաքական ու գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերության նախագահ, Սովետական Մեծ Հանրագիտարանի գլխավոր խմբագիր, Ստալինյան մրցանակի կրկնակի լաուրեատ, ակադեմիկոս Սերգեյ Իվանովիչ Վավիլովը։

Հանձին ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի սովետական ժողովուրդը կորցրեց խոշորագույն գիտնականի և պետական ու հասարակական ականավոր գործչի։

Ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովը իր բոլոր ուժերն ու գիտելիքները նվիրաբերեց Հայրենիքին, սովետական գիտությանը, կոմունիզմի մեծ գործին անձնվիրաբար ծառայելուն։